

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն և մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի համաձայն պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը, նորությունը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը նշված կանոնակարգի 8-րդ կետին:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունն ունի երկու կողմ՝ գիտատեսական և գործնական: Ատենախոսական հետազոտության թեմայի տեսական արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դատական վերահսկողության օբյեկտները կարիք ունեն հստակեցման, որի համար անհրաժեշտ է մշակել այն ընդհանուր տեսական հատկանիշները, որոնց հիման վրա հնարավոր կլինի հստակ տարբերակել նոմատիվ և անհատական բնույթի ակտերը, ինչպես նաև նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտերի նույնականացման չափանիշները: Այդ մշակումները հնարավորություն կտան իմաստավորել իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտը, վեր հանել դրա տեսականորոն հնարավոր օբյեկտների շրջանակը և այն համադրել գործող օրենսդրության համակարգում որպես դատական վերահսկողության օբյեկտ ճանաչված շրջանակի հետ: Այդ խնդրի լուծումն իր հերթին նախադրյալ է ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների տեսականորեն հնարավոր շրջանակից դուրս մնացած մի շարք իրավական ակտերն առանձնացնելու համար, և հիմնավորել այն գործնական հայեցակարգային գաղափարը, որ՝ ՀՀ իրավական համակարգում պետք է էքսպլիցիտ ճանաչել պետական և ոչ

պետական մարմինների ընդունած նորմատիվ բնույթի լոկալ (ներքին) իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտը:

Վերոնշյալ ուղղությամբ իրականացվելիք իրավական բարեփոխումները հնարավորություն կտան բարձրացնել անհատների ու կազմակերպությունների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանվածությունը, ինչպես նաև հասարակության մեջ իրավական օրինականության և արդարության մակարդակը:

Դոկտորական ատենախոսության դրույթների և եզրահանգումների ճշտության պահանջը նշանակում է, որ ներկայացված հետազոտությունը պետք է ճիշտ արտացոլի օբյեկտիվ իրականությունը: Հեղինակը նյութի շարադրման հիմքում մեծամասամբ դրել է իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ամեն մի ինստիտուտի վերլուծելիս լուսաբանված են ոչ միայն տվյալ ինստիտուտի հիմք հանդիսացող օրենքները, այլև հասարակական տարաբնույթ գործոնները, օրենքների կիրառման պրակտիկան, դրա սոցիալական-իրավական հետևանքները: Նման համալիր մոտեցումը հնարավորություն է տվել հեղինակին խուսափելու միայն օրենսդրության վերլուծությունից, բացահայտել և վերլուծել դատական վերահսկողության կառուցակարգի պատմության վրա ներազդող զանազան գործոնները:

Արդյունքում հեղինակին իրապես հաջողվել է պահպանել իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մեթոդաբանական մոտեցումները և դրա սկզբունքները՝ պատմականությունը, օբյեկտիվությունը, համալիրությունը, բազմակարծությունը և այլն:

Գիտական աստիճանի հայցման համար ներկայացված աշխատանքի գնահատման հաջորդ որակական պահանջն է **ատենախոսության եզրահանգումների և պաշտպանության ներկայացված դրույթների նորությունը**: Որպես կանոն, նորությունը ենթադրում է նոր տեսական օրինաչափությունների, սկզբունքների, հայեցակարգերի առաջադրում:

Ռ. Խանդանյանի ատենախոսության նորույթը պետք է գնահատվի երկու տեսանկյունից՝ որպես կիրառական նշանակություն ունեցող տեսական գիտելիքի աղբյուր և պատմաիրավական հետազոտություն:

Ատենախոսության մեջ ամբողջական, համակարգված հետազոտության է ենթարկվել նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական

վերահսկողության գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության վարչական արդարադատության համակարգում: Հեղինակն այդ հիմնահարցի ուսմնասիրության հիմքում դրել է պատմաիրավական մոտեցումը, փորձելով դատական վերահսկողության ինստիտուտի ծագման, կայացման, զարգացման պատմության ընդհանուր գծերի ուսումնասիրության միջոցով վեր հանել ինստիտուտին բնորոշ իրավական օրինաչափությունները, առավելություններն ու թերությունները:

Միննույն ժամանակ հեղինակը պատմական փորձի վերլուծության հիման վրա առաջ է քաշել հայեցակարգային և գործնական նշանակություն ունեցող տեսական հիմնադրույթներ, որոնք կարող են օգտագործվել արդի պետաիրավական համակարգի կատարելագործման և բարեփոխման համար: Մասնավորապես աչքի է ընկնում հեղինակի կողմից ՀՀ իրավական համակարգում պետական և ոչ պետական մարմինների ընդունած նորմատիվ բնույթի լուրջ (ներքին) իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության հայեցակարգի հիմնավորումը և դրա հիմնադրույթների մշակումը: Կարծում ենք, որ նշվածն ապահովում է աշխատանքի գիտական նորույթի առաջին կողմը, այն է հանդիսանալ կիրառական նշանակություն ունեցող տեսական գիտելիքի աղբյուր:

Դոկտորական ատենախոսության եզրահանգումների հիմնավորման աստիճանը: Գիտական հիմնավորումը տրամաբանության տեսանկյունից որևէ դրույթի ճշմարտացիության օգտին փաստերի և փաստարկների ներկայացումն է: Այս տեսանկյունից պետք է նկատել, որ ատենախոսության բոլոր եզրահանգումների հիմքում ընկած են հստակ տեսական, իրավական աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր: Բոլոր եզրահանգումները կառուցված են տեսական և նորմատիվ աղբյուրների, իրավակիրառական պրակտիկայի նյութերի վրա:

Վերոնշյալով հանդերձ ատենախոսությունը առաջ է բերում մի շարք դիտողություններ և նկատառումներ: Մասնավորապես՝

1. Որպես կանոն և՛ թեկնածուական, և՛ դոկտորական ատենախոսությունների ներածությունն ունենում է հետևյալ թվարկումով կառուցվածք՝ հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտական հիմքերը, ատենախոսական հետազոտության մեթոդաբանա-

կան հիմքերը և/կամ սկզբունքները, ատենախոսության գիտական նորույթը, ներառյալ պաշտպանության հանվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը: Սույն ատենախոսության ներածության կառուցվածքի շարադրման հարցում նկատվում են որոշ խնդիրներ:

Նախ, բուն ատենախոսության ներածական մասում բացակայում են հետազոտության թեմայի արդիականությանը նվիրված մասի ենթավերնագիրը, չկան հետազոտության օբյեկտի և առարկայի վերլուծությունները, հետազոտության արդյունքների փորձարկման նկարագրությունը, իսկ ատենախոսության գիտական նորույթի նկարագրությունը տարանջատված է պաշտպանության հանվող դրույթներից: Այդ դրույթները շարադրված են ատենախոսության ներածականի վերջնամասում, մինչդեռ գիտական նորույթը նկարագրված է ներածության սկզբնամասում:

Բացի այդ առկա են և՛ բովանդակային, և՛ կառուցվածքային տարբերություններ բուն ատենախոսության և ատենախոսության սեղմագրի ներածական մասերի շարադրանքների միջև: Կառուցվածքային այն մասերը, որոնք բացակայում են բուն ատենախոսության ներածական մասում, առկա են ատենախոսության սեղմագրի ներածական մասում:

2. Աշխատանքը կլինե՞ր շահած, եթե հեղինակը դրսևորեր գիտական համարձակություն որոշ հարցերի վերլուծության հարցում, հարուստ իրավական ու փաստագրական նյութի առկայության ու վերլուծության պայմաններում, փորձեր վեր հանել նաև արձանագրված իրավական բացասական իրողությունների հիմքում ընկած պատճառներն ու պայմանները: Խոսքը մասնավորապես վերաբերում է հեղինակի կողմից արձանագրված անցյալի որոշակի փաստերին, այն է՝ ՀՀ դատարանների հրաժարումը ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթից (2.4.5.3. ենթագլուխ, էջ 116-119): Կարծում ենք հետազոտության համալիրության ապահովման նկատառումներից ելնելով անհրաժեշտ էր ոչ միայն իրավակրառական պրակտիկայի ընթացքում նկատվող բացասական միտումները ներկայացնել սոսկ որպես ոչ ադեկվատ մեկնաբանման արդյունքում ծավալված իրողություն, այլև վեր հանել դրա հիմքում ընկած քաղաքական-ռեժիմային, տնտեսական, կրթական և այլ պատճառները:

3. Պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթով հեղինակի կողմից առաջարկված մոտեցումը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում ամրագրված «անհատապես նշված անձանց» ձևակերպումը մեկնաբանել ոչ թե տառացի, այլ տարածական-նպատակային սկզբունքով, ըստ որի՝ ակտը կարող է դիտվել ոչ միայն *in personam*, այլև *in rem*, չի կարող համարվել իրավաբանորեն կայուն դիրքորոշում:

Առաջին՝ այս ձևակերպումը հակասում է հենց նշված օրենքի կառուցվածքին և համակարգային տրամաբանությանը: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը հստակ տարանջատում է նորմատիվ և անհատական իրավական ակտերը՝ ելնելով դրանց հասցեատերերի հստակեցված կամ անորոշ լինելու հանգամանքից: Հեղինակի կողմից առաջարկվող մեկնաբանությունը փաստացի ջնջում է այս սահմանը, ստեղծելով իրավական անորոշություն այն հարցում, թե երբ է ակտը համարվում անհատական և երբ՝ նորմատիվ:

Երկրորդ՝ տարածական-նպատակային մեկնաբանության գաղափարը տվյալ համատեքստում հիմնավորված չէ ոչ իրավական մեթոդաբանությամբ, ոչ էլ դատական պրակտիկայով: Դրանով կարող է խախտվել իրավունքի հստակության և կանխատեսելիության սկզբունքը, որը Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված հիմնարար սկզբունք է: Եթե յուրաքանչյուր վարչական որոշում, որն ունի տարածական ազդեցություն, դիտվի որպես *in rem*, ապա դատական վերահսկողության օբյեկտ կարող են դառնալ նույնիսկ այն վարչական ակտերը, որոնք ունեն բացառապես անհատական նշանակություն:

Երրորդ՝ նման մեկնաբանությունը ոչ միայն տեսականորեն անորոշ է, այլև գործնականում վտանգավոր՝ այն կարող է հանգեցնել դատական պրակտիկայում կողմնորոշիչ չափանիշների բացակայության: Արդյունքում դատարանները ստիպված կլինեն յուրաքանչյուր դեպք առանձին կերպով գնահատել՝ առանց հստակ չափանիշների, ինչը կխաթարի վարչական արդարադատության կայունությունը: Բացի այդ, հեղինակի առաջարկը՝ գործող օրենքը մեկնաբանել ապագա փոփոխությունների կանխատեսման հիման վրա, հակասում է իրավական մեկնաբանության դասական սկզբունքներին, ըստ որոնց մեկնաբանությունը պետք է հիմնվի գործող իրավունքի վրա, այլ ոչ թե՝ ապագա օրենսդրական փոփոխությունների հնարավորության վրա:

4. Պաշտպանության ներկայացվող ութերորդ դրույթում արտահայտված հեղինակի դիրքորոշումը՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածը վերաձևակերպելու վերաբերյալ՝ «generalis clausula» սկզբունքի հիման վրա, խնդրահարույց է: Առաջին՝ «generalis clausula» սկզբունքը՝ որպես իրավական մեթոդաբանություն, բնորոշ է քաղաքացիական իրավունքի կարգավորմանը և ունի լրացնող բնույթ, երբ օրենքը չի պարունակում հստակ կանոն: Այն կիրառվում է իրավական բացերի լրացման նպատակով, սակայն ոչ որպես օրենսդրական վերաձևակերպման հիմք: Հեղինակի կողմից դրա տեղափոխումը վարչական դատավարության ոլորտ՝ խախտում է իրավունքի ճյուղերի ըստ բնույթի, կարգավորման մեթոդների տարբերակման սկզբունքը և հանգեցնում է հայեցակարգային խառնաշփոթի:

Երկրորդ՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածը ներկայումս կառուցված է պոզիտիվ իրավական տաքսացիայի մեթոդով, այսինքն՝ հստակ թվարկում է այն դեպքերը, երբ նորմատիվ բնույթի ակտերը ենթակա են բողոքարկման: Այդ մոտեցումը բխում է վարչական իրավունքի կանխատեսելիության և իրավական հստակության սկզբունքներից: Հեղինակի առաջարկը՝ դրույթը վերաձևակերպել «ընդհանուր դրույթի» սկզբունքով, փաստացի վերացնում է այդ կանխատեսելիությունը՝ ստեղծելով իրավիճակ, երբ գրեթե բոլոր հանրային մարմինների ընդունած ակտերը կարող են դառնալ դատական բողոքարկման օբյեկտ՝ անկախ դրանց բնույթից կամ իրավական հետևանքներից:

Երրորդ՝ առաջարկվող ձևակերպումը իրավական տեխնիկայի տեսանկյունից անորոշ է: Ակտի բողոքարկման ենթակայության չափանիշը չի սահմանվում, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի դատական պրակտիկայում տարբեր և հաճախ հակասական մեկնաբանությունների: Այս պարագայում դատարանը փաստացի կդառնա ոչ թե օրենքի կիրարկող, այլ՝ նոր իրավական նորմ ստեղծող սուբյեկտ, ինչը հակասում է իշխանությունների տարանջատման սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված): Բացի այդ, «generalis clausula» սկզբունքը, որպես ընդհանուր դրույթ, ենթադրում է, որ իրավական կարգավորումը բաց է և լրացվում է դատարանի հայեցողությամբ: Վարչական դատավարության դեպքում նման բաց համակարգը կարող է վնասել պետական կառավարման կայունությանը, քանի որ դատարանը ձեռք

կրերի ոչ համաչափ մեծ վերահսկողական լիազորություն՝ առանց օրենսդրական սահմանների հստակեցման: Այս ամենից հետևում է, որ հեղինակի առաջարկած լուծումը, թեև ձևապես նորարարական է, սակայն գործնականում դժվար իրագործելի:

Վերոբերյալ դիտողություններն ու նկատառումներն այնուամենայնիվ չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Ներկայացված նկատառումները առնչվում են գիտական բանավեճի շրջանակներին կամ ունեն խմբագրական թերություններն ընդգծելու բնույթ և չեն նսեմացնում այն գիտական աշխատանքը, որը ներկայացվել է հրապարակային պաշտպանության:

Ռ. Խանդանյանի «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» դոկտորական ատենախոսությունում կատարված է տեսաիրավական փաստերի մանրազնին հետազոտություն և վերլուծություն որոշակի պատմական համատեքստում, արված են գիտական ընդահանրացումներ և առաջ են քաշված մի շարք տեսական ու գործնական բնույթի հիմնադրույթներ, որոնք կարևոր նշանակություն կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության արդի իրավական համակարգի խնդրո առարկա ոլորտի բարեփոխման համար:

Հեղինակի հրատարակած մենագրությունները և գիտական հանդեսներում տպագրված հոդվածները, ատենախոսությանը վերաբերող թեմաներով գիտական զեկուցումներն արտացոլում են աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված հիմնադրույթները:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ռ. Խանդանյանի «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 8-րդ կետի դոկտորական ատենախոսության համար սահմանված պահանջներին:

Հայաստանյան իրավագիտության մեջ ամբողջական, համակարգված պատմաիրավական և տեսագործական հետազոտության են ենթարկված արդի

իրավագիտության մեջ հիմնարար նշանակություն ունեցող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության բնույթը, կառուցվածքը և իրավաչափության չափանիշները: Հետազոտությունը կարելի է գնահատել որպես էական գիտական նվաճում «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական ուսմունքների պատմություն» (ԺԲ.00.01) մասնագիտությամբ: Հեղինակը՝ Ռ.Գ. Խանդանյանն արժանի է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝



Ա.Գ. ՎԱՂԱՐՅԱՆ

23 հոկտեմբերի 2025 թ.,

Պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար՝



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25 հոկտեմբերի 2025 թ.,